ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ՝ ԲԺՇԿԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ՀԱՄԱՐՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 3-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «քննիչին, դատախազին, դատարանին՝ իրենց վարույթային պարտականությունները կատարելիս՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված փորձաքննություններով փորձագետի կազմած եզրակացությունների»:

Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 9-րդ կետով սահմանված է, որ առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության բժշկական գաղտնիք համարվող տվյալները փոխանցվում են նաև Մարդու իրավունքների պաշտպանին (այսուհետ՝ Պաշտպան):

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Պաշտպանին ներկայացված բողոքը համարվում է բողոք ներկայացրած անձի համաձայնություն և հիմք է անհրաժեշտ անձնական տվյալները Պաշտպանի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից օրենքով սահմանված կարգով ստանալու համար:

Վերոգրյալից հետևում է, որ Նախագծով օրենքի վերոնշյալ հոդվածից հանվում է բժշկական գաղտնիք համարվող տվյալները, առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, Կառավարության սահմանած կարգով Մարդու իրավունքների պաշտպանին փոխանցելու հնարավորություն նախատեսող դրույթը:

Նախագծի հիմնավորման մեջ նշված է, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքը անձի բողոքը դիտարկում է որպես անձի համաձայնություն, ինչը հիմք է համապատասխան տվյալները ստանալու համար, իսկ ոլորտային օրենսդրությամբ նշվածը դիտարկվում է որպես առանց պացիենտի համաձայնությամբ տրամադրման ենթակա տեղեկատվություն:

Հարկ ենք համարում նշել, որ Նախագծով առաջարկվող փոփոխություններով ըստ էության սահմանափակվում է Պաշտպանի՝ բժշկական գաղտնիք համարվող տվյալները ստանալու լիազորությունը: Մասնավորապես, Օրենքից վերոնշյալ դրույթը հանելով ստացվում է, որ Պաշտպանի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից օրենքով սահմանված կարգով անհրաժեշտ անձնական տվյալները կարող են ստացվել Պաշտպանին ներկայացված բողոքի առկայության պարագայում, ինչը համարվում է բողոք ներկայացրած անձի համաձայնություն:

Միևնույն ժամանակ, **«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** սեփական նախաձեռնությամբ քննարկում իրականացնելիս Պաշտպանն օգտվում է սույն օրենքով իրեն վերապահված բոլոր լիազորություններից, որոնք նա իրականացնում է բողոքի քննարկման կապակցությամբ:

Նույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ՝ Պաշտպանն իրավասու է ստանալու տեղեկություններ և պարզաբանումներ ազատությունից զրկման վայրում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի, նրանց պահման պայմանների, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ցանկացած այլ հարցի վերաբերյալ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով ազատությունից զրկման վայրեր են համարվում՝(…)

3) հոգեբուժական կազմակերպությունները.(…):

Սույն իրավակարգավորումներից հետևում է, որ Պաշտպանն իրավասու է քննարկել մարդու իրավունքների և ազատությունների խախտումները ոչ միայն բողոքի առկայության դեպքում, այլև սեփական նախաձեռնությամբ, որի դեպքում ևս Պաշտպանն

օգտվում է սույն օրենքով իրեն վերապահված բոլոր լիազորություններից: Բացի այդ՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ իր գործառույթներն իրականացնելու նպատակով Պաշտպանն իրավասու է ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, օրինակ՝ հոգեբուժական կազմակերպություններում գտնվող անձանց վերաբերյալ: Այսպիսով, կարծում ենք, որ Պաշտպանին բժշկական գաղտնիք համարվող տվյալները կարող են փոխանցվել ոչ միայն դիմումների առկայության պարագայում, այլև մշտադիտարկումներ և սեփական նախաձեռնությամբ քննարկումներ իրականացնելիս:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարևոր ենք համարում Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 9-րդ կետով սահմանված դրույթի պահպանումը, որը նախատեսում է Պաշտպանին առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության բժշկական գաղտնիք համարվող տվյալները փոխանցելու հնարավորություն: Դա բխում է Պաշտպանի լիազորությունների արդյունավետ իրականացմանը վերաբերելի միջազգային և ներպետական չափանիշներից: